

Վարուժան, գրչի մէկ հարուածով, կրցած է վերջ տալ այն հին տաղտկալի դպրոցին որ, դեռ քառորդ դար մը առաջ, հայրենասիրութեան պատրուակին տակ՝ գիտցաւ միայն միօրինակօրէն լալկան, տժգունօրէն յուսահատ երգեր հրամցնել մեզ եւ քնացնել ընդարմացնել մեր մէջ մեր նախահարց հեթանոս արիւնը, ստեղծիչ խանդը: Վարուժանի հայրենասիրական երգերը կը նմանին այն հայրենի աղբիւրներուն, որոնցմէ թէւ ջուրն արտօսքի պէս կը կաթի, համեստունակ կայլակ առ կայլակ, բայց այդ լեռնաբոյր գուլալ ջուրն ընտիր է ու սնուցիչ՝ կաթի ու արիւնի պէս եւ զայն արտասուացօղ կայլակող աղբիւրները մութին մէջ ցայտող վեհակարկառ սպիտակ ճակատ մը ունին՝ բաղեղներով ու ծիծեռնակներու բոյներով պսակուած:

Հեթանոս երգերուն հորիզոնը – քանի որ այսօր կոչուած եմ ծանրանալ միայն Վարուժանի այս վերջատիպ երկին վրայ – աւելի ընդարձակ է: Հեթանոս կը կոչուին առ հասարակ բոլոր այն նիւթերը որոնք, ներկայէն անկախ, անցեալ ժամանակներու եւ գեղարուեստական հնութիւններու վայրենի հրապոյրն ունին, աւելի կամ նուազ գիտակցուած, *ուզուած* ու արուեստ եղած: Լրքոնթ տը Լիլ, եւ իր տիրապետող հմայքին ու ազդեցութեան տակ գրող բանաստեղծները, Հերետիա, Լէոն Տիէոքս, Հանրի Գազալիս, Լորան Թայյատ, եւ ուրիշներ այս առումով հեթանոս երգիչներ եղած են¹⁷: Աւելի կամ նուազ դժգոհ եւ ուժացած ներկայ ժամանակիս արուեստին լրբօրէն անձնական, խուսափուկ, անյոյզ եւ անխտէալ երանգներէն, ուզած են վերակոչել հին ժամանակներու պատմական մեծ տպաւորութիւնները, մեծ կիրքերը, եւ միխթարուիլ՝ վերապրելով անոնցմէ բոլոր հաստատուն բեղմնաւոր ուժին բոլոր ընտիր ձեւերը, ժեսդերն ու պատկերները: Այս կարգէն է Վարուժանի երկար քերթուածը, *Հարճը*, Բագրատունեաց հարստութեան շրջանէն վիթխարի արձագանգ մը, ակնախտիղ վայրենաշքեղ պատկերներով հոծուած, ինչպէս այս կարգէն էին *Յեղին*